Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «30» սեպտեմբերի 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման . Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում է՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

Համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 29-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Սարգիս Արմենակյանը:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի սեպտեմբերի 30-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	**Հասցեն, հեռախոսահամարը**
«ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան 12, հեռ. (010) 566604
«ՓՐԻԹԻ ՈՒԵՑ» ՍՊԸ	ք. Երևան, Ծովակալ Իսակով 48/1, հեռ. (098) 190077

3. Համակարգում 22.09.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

4. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. հոկտեմբերի 03-ին, ժամը՝ 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ Սարգիս Արմենակյան

Անդամներ՝ Կարեն Մելքոնյան

Էդգար Տոնականյան

Աղավնի Բուդուլյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան